ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ փաստաբանի ծախսը վճարում է նրան ներգրաված գործին մասնակցող անձը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության ծախսեր են համարվում նաև փաստաբանական կազմակերպություններին վճարված կամ վճարման ենթակա գումարները:

Սույն հոդվածով նախատեսված ծախսերի փոխհատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափը, որը որոշվում է՝ ելնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալից, գործի բարդությունից, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակից, ինչպես նաև դատական ակտով բռնագանձման ենթակա գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափերի հարաբերակցությունից:

Ելնելով վերը նշված չափանիշներից և նկատի ունենալով, որ «Կոնցեռ-Դիալոգ» ՓԲ ընկերության և «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊ ընկերության միջև 08.11.2024 թվականին կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ պայմանագրով ծառայությունների մատուցման համար ենթակա գումարը կազմում է 300.000 ՀՀ դրամ, չհաշված ԱԱՀ, ինչպես նաև հաշվի առնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը), Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակը, Դատարանը փաստաբանի վարձատրության գումարի բռնագանձման մասով գալիս է այն եզրահանգման, որ սահմանված փաստաբանի վարձատրության չափը նշված գործով ողջամիտ և խելամիտ չէ: Դատարանը փաստաբանի վարձատրության գումարի բռնագանձման մասով գտնում է, որ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության չափ պետք է դիտել 200.000 ՀՀ դրամը, որը նման պայմաններում ենթակա է բռնագանձման պատասխանողից հօգուտ հայցվորի, իսկ դատական ծախսերի հարցը մնացած մասով պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Գեվտանիք» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ «ԱԲԱԿ» ՍՊ ընկերության՝ «Գեվտանիք» ՍՊ ընկերության հայտը հրավերի պահանջներին անհամապատասխան գնահատելու և մերժելու մասին «ՀՀ ՊՆ-ԲՄԱՇՁԲ-25-10/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 06.11.2024 թվականի արձանագրային որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ բաց մրցույթում ընտրված մասնակից «ԱԲԱԿ» ՍՊԸ-ին ճանաչելու մասին, բաց մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին, բաց մրցույթին ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու մասին արձանագրային որոշումներն

անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել.

1.1. անվավեր ճանաչել «ՀՀ ՊՆ-ԲՄԱԾՁԲ-25-10/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 6-ի արձանագրային որոշումը՝ «Գեվտանիք» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին անհամապատասխան գնահատելու և մերժելու մասին (թիվ 3 արձանագրության 2.5-րդ կետ):

1.2. որպես հետևանք՝ անվավեր ճանաչել գնահատող հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 6-ի արձանագրային հետևյալ որոշումները ՝

1.2.1. բաց մրցույթում ընտրված մասնակից «ԱԲԱԿ» ՍՊ ընկերությանը ճանաչելու մասին (թիվ 3 արձանագրության 4.1-րդ կետ),

1.2.2. բաց մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին (թիվ 3 արձանագրության 4.2-րդ կետ),

1.2.3. բաց մրցույթին ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու մասին (թիվ 3 արձանագրության 4.4-րդ կետ):

2. ՀՀ պաշտպանության նախարարությանից հօգուտ «Գեվտանիք» ՍՊ ընկերության բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարած պետական տուրքի գումար:

2.1 ՀՀ պաշտպանության նախարարությանից հօգուտ «Գեվտանիք» ՍՊ ընկերության բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատվության գումար:

3. «Գեվտանիք» ՍՊ ընկերությանը վերադարձնել նախապես ավել վճարված՝ 20.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը (վճարման ամսաթվի 11.11.2024թ., ծածկագիր՝ 6921-1864-6671-9818-9788):

4. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Ճիլաջյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am